

## «ՂԱԶԱՐՈՍԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԸ» ԹԵՄԱՆ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Հայ արուեստի պատմութեան մէջ բացառիկ տեղ է գրաւում Թոռոս Ռոսլինի ժառանգութիւնը:

Գեղեցիկը տեսնող ու պաշտող քանի՛ քանի՛ մարդկանց, քանի՛ քանի՛ գեղագէտների, գրողների, արուեստաբանների, նկարիչների է գերել ռոսլինեան բանաստեղծական աշխարհը։ Ակսած նրա մեկենաս եւ հովանաւոր Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսից ու կիլիկեան արքաներից մինչեւ անմահ վարպետի արուեստին գերի այն հասարակ մարդիկ, որոնք փրկել, երբեմն նոյնիսկ իրենց կեանքը զոհեով, պահպանել են նկարչի մատեանները հասցրել մինչեւ մեր օրերը։

Սկսած 14րդ դարի գլածորեան ծաղկողներ Թորոս Տարօնացուց եւ Աւագից, մինչեւ 20րդ դարի երփնագրողներ Արշիլ Գորկի-Ռոստանիկ Աղոնեանը եւ Մինաս Աւետիսեանը բազմաթիւ նկարիչներ հիացել ու սովորել են մեծ կիլիկեցու մանրանկարներից։

Թորոս Ռոսլինի հրաշակերտները հմայել են մեր դարի գրական հսկաներից, Արշակ Չոպանեանին եւ նա թէ՛ գրչով, թէ՛ բանաւոր խոսքով ծառայել է դրանց պանծացմանն ու մասսայականացմանը։

Անզուգական երփնագրողի մանրանկարների ուսումնասիրութեամբ զբաղուած են այսօր ոչ միայն հայ գիտնականները, այլեւ ոռու, ֆրանսացի, իտալացի, ամերկացի, աւստրիացի արուեստաքանները։

Ռոսլինեան մասունքների հետքերով գնացող գեղագէտը, մեծ կիլիկեցու մասնագիտական գաղտնիքները վերծանող ուսումնասիրողը մուտք է գործում հայկական հազարամեայ գրքարուեստի ու մշակոյթի «յիշողութեան» մէջ եւ դառնում հին ծաղկողների ստեղծագործական փորձի, հմտութեան թարգմանը։

Հայ մանրանկարիչների աշխատանքների ծով հարստութեան մէջ Թորոս Ռոսլինի ժառանգութիւնը առանձնանում է ոչ միայն իր բարձը արուեստով, այլ նաև բազմաբնոյթ թեմաներով։

Նշանաւոր վարպետի ձեռագրերում կան մանրանկարներ, որոնք յօրինուած են հազուադէպ նկարագարդուած, ինչպէս եւ ամենատարածուած թեմաներով։ Նրան զբաղեցրած թեմաների շարքում պահում են այնպիսիները, որոնց նկարիչը անդրադարձել է մի քանի անգամ։ Իր կեանքի տարբեր տարիներին է նա նկարագարդել եւ «Ղազարոսի յարութեան» պատմութիւնը։

«Ղազարոսի յարութիւնը» միջնադարեան արուեստում աւելի յաճախ է նկարագարդուել, քան որեւէ ուրիշ պատմութիւն։

Այս գրուագը Քրիստոսի հրաշագործութիւնների շարքում ամենաշանակալից է եւ անցեալում դիտուել է իրեւ մարդկութեան համընդհանուր փրկութեան գրաւական։ Դրանով է պայմանաւորուած այդ թեմայի բացառիկ մասսայականութիւնը<sup>1</sup>։

«Ղազարոսի յարութեան» հնագոյն ձեւաւորումները հայ արուեստում յայտնի են Աղքամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներից (915-921 թթ.)։ Աւելի ուշ այս թեման երեւան է գալիս 11րդ դարի մանրանկարներում<sup>2</sup> եւ Մատենադարանի թիւ 10780 ձեռագրի պատկերների շարքում։ Բացառութեամբ վերջին յուշարձանի, միւս բոլոր ստեղծագործութիւնների պարագայում գործ ունենք բազմամարդ յօրինուածքի հետ։ Իսկ թիւ 10780 մատեանի մանրանկարի (էջ 243ա) համար նկարիչը որդեգրել է պարզ մի տարբերակ։ պատկերել է Քրիստոսին, Ղազարոսին, վերջինիս պատանքը բացող ծառային եւ Ղազարոսի քոյրերից մէկին։

12րդ դարի հայ գրքարուեստում «Ղազարոսի յարութեան» օրինակներ յայտնի չեն։

Մինչեւ Թորոս Ռոսլինը 13րդ դարի հայկական ձեռագրերից միայն երկուսում են այդ թեմայով կատարուած պատկերներ հանդիպում։ Այստեղ նկատի ունենք իգնատիոս Հռոռմոսցու ծաղկած 1236 թ. Աւետարանի (Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանքի թանգարան, թիւ 36)<sup>3</sup> եւ 1232 թ. Թարգմանչաց Աւետարանի (Մատենադարան, թիւ 2743), ձեւաւորումները, որոնցից առաջինը բազմամարդ մի երկ է, իսկ երկրորդը խիստ համառօտ օրինակ։ Վերջինս բաղկացած է միայն Քրիստոսի եւ Ղազարոսի կերպարներից։


1. *Տե՛ս L. RÉAU, Iconographie de l'Art Chrétien, t. 2, Paris, 1957, p. 388.*

2. *Տե՛ս S. DER-NERSESSIAN, Armenia and Byzantine Empire, A Brief Study of Armenian Art and Civilization, Cambridge, Mass., 1945, pl. XVII (1); T. A. ISMAILOVA, L'Iconographie du cycle des fêtes d'un groupe de codex arméniens d'Asie Mineure. - RÉA, 1967, t. IV, pl. XLI, fig. 13, pl. XLII, fig. 14, 15; IDEM, Le cycle des fêtes du Tétraévangile de Mougna (Maténadaran, N° 7736). - RÉA, t. VI, pl. VI.*

3. *Տե՛ս Յ. ՔիիրՑեան, իգնատիոս մանրանկարիչ, «Անահիտ», 1939, թիւ 3, էջ 32-44; S. DER NERSESSIAN, Armenia and Byzantine Empire, pl. XXX, fig. 2; K. WESSEL, Erweckung des Lazarus. - In: Reallexikon zur byzantinisch Kunst, Bd. II, Stuttgart, 1971, col. 405, 406.*

ՅԱՐՈՒՅԻՒՆԱՎ

ՅԱՐՈՒ



Նկ. 1.- «Ղազարսի յարուբիւմը», 1265 թ. Աւետարանի (Երուսաղէմ, Սր. Յակոբ վանց վանքի գրադարան, ձեռ. 1956) մանրանկար, էջ 310թ, նկարիչ Թորոս Ռոսլին:

«Ղազարոսի յարութեան» պահպանուած հայկական մանրանկարները ցոյց են տալիս, որ հայ ծաղկողներին ծանօթ են եղել ամենատարբեր տիպի պատկերագրական յօրինուածքներ:

«Ղազարոսի յարութիւնը» թեմայով Ռուսինի կատարած առաջին մանրանկարը (նկ. 1) հանդիպում է 1265 թ. Աւետարանում (Երուսաղէմ, Սր. Յակոբեանց վանքի գրադարան, թիւ 1956): Այդ ձեռագիրը մեծանուն վարպետը ծաղկել է Կոստանդին Համբրոնացու դըստեր՝ Կեռանի համար: 1265 թ. մատեանում խնդրոյ առարկայ պատկերը գտնւում է Յովհաննէսի բնագրում (էջ 310թ): Դա զարմանալի չէ, որովհետեւ Ղազարոսի յարութեան մասին խօսւում է չորրորդ աւետարանչի պատմութեան մէջ (Ցովկ. ԺԱ, 1-45):

Արեւելքում տարածում գտած կանոնի համաձայն Քրիստոսը այս-տեղ պատկերուած է ձախից դէպի աջ շարժուելիս: Նրա ետեւից ցոյց են տրուած երկու առաքեալներ, որոնց գլխավերեւում տեսանելի են միւս վեց աշակերտների լուսապակները: Մանրանկարի աջ մասում ներկայացուած է ուղղի կանգնած Ղազարոսը: Նրա եւ Քրիստոսի միջեւ զետեղուած է ծառայի կերպարանքը: Այս թեմայով յօրինուած ստեղծագործութիւններում վերջինս սովորաբար մի ձեռքում բռնած է լինում յարուցեալի պատանքի ծայրը, իսկ միւսով ծածկում է դէմքը կամ փակում քիթը գերեզմանի գարշահոտից: Կանոնիկ դարձած այս առանձնայատկութիւնը Ռուսինի մանրանկարում բացակայում է: Մենք տեսնում ենք ծառայի կերպարի ոչ սովորական մեկնաբանութիւնը: Նրա ձախ ձեռքը պարզապէս հպւում է աջ կողին, Ղազարոսի սաւանի ծայրից քաշելու փոխարէն: Մէկ ուրիշ արտասովոր մանրամասն է եւ այն, որ նա կանգնած է յարուցեալի ոտքերի տակ ընկած դագաղի կափարիչի վրայ:

Ղազարոսը կանգնած է գերեզմանի ուղղանկիւն բացուածքի առաջ: Գերեզմանը հարթ տանիքով շէնքի տեսք ունի, որի ետեւից բարձրանում են մի քանի այլ կառոյցներ:

Պատկերի վերեւի ձախ կողմերում նկարուած լեռն ու մենաւոր ծառը իրենց ձեւերով կարծես շեշտում են Քրիստոսի եւ առաքեալների խմբի շարժման ուղղութիւնը: Մէկ ամբողջութիւն կազմող խմբի «շարժումը» թւում է, թէ հաղորդուում է նաեւ ծառայի կերպարին եւ պատճառ դառնում նրա դէպի Ղազարոսը թեքուելուն: Յարուցեալի եւ ճարտարապետական կառոյցների ուղղահայեաց բնոյթին հակադրելով մնացած կերպարների թեքուածութիւնը, Ռուսինը մանրանկարի յօրինուածքը դարձնում է իիստ շարժուն:

4. Տե՛ս Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ, Նրուսալէմի Հայոց Պատրիարքանի գանձերը, Երուսաղէմ, 1989, նկ. 7, էջ 39-40: Armenian Art Treasures of Jerusalem, Edited by B. Narkiss, In collaboration with M. E. Stone, Historical survey by A. K. Sanjian, New Rochelle, 1979, fig. 72.

Պատկերի վերին մասում ոսկեզօծ խորքի վրայ ընթերցւում են կապոյտ գոյնով գրուած «Յարութիւն Ղազարու» բառերը:

Թորոս Ռոսլինի ստեղծագործութեան համառօտ նկարագրութիւնից երեւում է, որ այստեղ ընդգրկուած չեն Ղազարոսի քոյրերը, դագաղի կափարիչը կամ գերեզմանի քարը վերցնող ծառաները, հըրեաների խումբը, որոնք բնորոշ են 13րդ դ. եւ հետագայ դարերի բազմաթիւ յուշարձաններին: Ռոսլինը իր մանրանկարի համար օդտագործում է ոչ այնքան շատ տարածուած, համառօտ նախօրինակ, որը նորութիւն է հայ արուեստում:

Եթէ բացառենք Քրիստոսին հետեւող աշակերտներին, ապա կարող ենք մտածել, թէ 1265 թ. նկարագարդման համար կիրառուած է այն հազուագիւտ պատկերատիպը, որի մասին գաղափար է տալիս Լոնդոնի Վիկտորիա եւ Ալբերտ թանգարանի 10րդ դ. փղոսկրէ քանդակը<sup>5</sup>: Այդ աշխատանքում նոյնպէս աջից ներկայացուած են Ղազարոսը, ծառան, ապա Քրիստոսը եւ մէկ առաքեալ: Այս յօրինուածքը, բացառութեամբ վերջին կերպարի, շատ հազուադէպ պատահում է նաեւ 11րդ դարում՝ վերոյիշեալ թանգարանի փղոսկրէ մէկ այլ քանդակում<sup>6</sup>:

11րդ դարի օրինակը, ի տարբերութիւն նախորդի, աւելի մօտ է Ռոսլինի մանրանկարին, որովհետեւ այդտեղ եւս գերեզմանը բարձր ուղղանկիւն է, որի ներքեւում տեսանելի է թեք ընկած կափարիչը:

Եթէ ճիշտ է, մեր ենթադրութիւնը եւ նշուած երկու փղոսկրէ քանդակների կամ նրանց նմանակների պատկերատիպերն են հիմք ծառայել Ռոսլինի ձեւաւորմանը, ապա առաքեալների խմբի աւելացումը պէտք է բացատրել 11րդ դարի Անիի գրքարուեստի օրինակների ազդեցութեամբ եւ թերեւս 12րդ դարի կանոնիկ օրինաչափութիւնների թելադրանքով:

Անիի գպրոցին վերագրուող Մուղնու Աւետարանի (Մատենադարան, թիւ 7736) «Ղազարոսի յարութեան» մէջ ընդգրկուած են բոլոր առաքեալները<sup>7</sup>: Բացի այդ, նկատուել է, որ բիւզանդական արուեստում նրանց թիւը 12րդ դարի ընթացքում գնալով աւելանում է՝ մէկից հասնում չորսի, իսկ դարավերջին նրանք մեծ խումբ են կազմում այնպիսի պատկերներում, ինչպիսիք են Ստուդենիցայի (Հարաւլաւիա) եկեղեցու 1183-1191 թթ. որմնանկարը եւ Մոնրէալի (Սիցիլիա) տաճարի խճանկարը<sup>8</sup>: Այս առանձնայատկութիւնը շարունակուում է դիտուել նաեւ 13րդ դարի արուեստի երկերում<sup>9</sup>:

5. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 399-400.

6. Տե՛ս նոյն տեղում:

7. Տե՛ս T. A. IZMAILOVA, *Le cycle des fêtes...*, p. 118-121, pl. VI.

8. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 401-402; L. HADERMANN-MIS-GUICH, KURBINOVO, *Les fresques de Saint Georges et la peinture byzantine du*

Թորոս Ռոսլինին մօտ ժամանակներում, նոյն 12րդ դարում ընդօրինակում էին եւ «Ղաղարոսի յարովթեան» թեմայի մէկ այլ պարզ տաղբերակը, որը առաջին անգամ հանդիպում է Սանտա-ապոլինարէ Նուովոյի (Ռավեննա) խճանկարում (520-526 թթ.): Այստեղ ներկայացուած են Ղաղարոսը, Քրիստոսը եւ նրան հետեւող Յովհաննէսը: 12րդ դարում այդ նախօրինակը հանդէս էր գալիս նաեւ բիւզանդական եւ ասորական ձեռագրերում. օրինակ՝ Քրիտանական թանգարանի երկու մատեանների (Addit. 7169 եւ Harley 1810) մանրանկարներում<sup>10</sup>:

Եթէ բացառենք առաքեալների թուի աւելացումը եւ ծառայի կերպարը, ապա կարելի է տեսնել, որ Ռոսլինի պատկերի համար կարող էր հիմք դառնալ նաեւ վերը յիշատակուած ասորական եւ բիւզանդական ձեւաւորումների նախօրինակը: Հնարաւոր է, որ այդ պատկերատիպը ծանօթ լինէր Թորոս Ռոսլինից ոչ այնքան առաջ ապրած հայ մանրանկարիչներին, օրինակ 1232 թ. Թարգմանչաց Աւետարանը ձեւաւորող Գրիգոր Մաղկողին:

Դիբախտաբար այժմ դժուար է հաստատ ասել, թէ մեր դիտարկած յօրինուածքներից որն է նախընտրել մեծահամբաւ կիլիկեցին: Եթէ նա կիրառել է 12րդ դարի վերը նշուած պատկերատիպը, ապա ծառայի կերպարը ընդգրկել է նոյն ժամանակի եւ իր դարի յուշարձաններին հետեւելով: Բացառիկ է եւ հազուադէպ պատահող ծառայի աջ ձեռքի շարժումը: Քիթը գարշահոտից փակելու փոխարէն թեքի մէջ ծածկը-ւած ձեռքը նա հպում է այտին: Բազմաթիւ յայտնի յուշարձաններից շատ քչերում է տեսանելի քննուող մանրամասնը: Նկատի ունենք յունական երկու սրբապատկերներ, որոնք վերաբերում են 12րդ դարին: Դրանցից մէկը գտնւում է Աթէնքում մասնաւոր հաւաքածոյում, իսկ միւսը Սինայի Ս. Կատարինէ վանքում<sup>11</sup>: Սինայի սրբապատկերը աւելի է նմանում Ռոսլինի մանրանկարին, որովհետեւ այդտեղ եւս Ղաղարոսը անմօրուք երիտասարդ է:

XII<sup>e</sup> siècle, Bruxelles, 1975, pl. 181, p. 134; O. DEMUS, *The Mosaics of Norman Sicily*, London, 1949, pl. 67b, p. 283.

9. Տե՛ս G. MILLET, *Recherches sur l'iconographie de l'Évangile aux XIV<sup>e</sup>, XV<sup>e</sup> et XVI<sup>e</sup> siècles d'après les monuments de Mistra, de la Macédoine et du Mont Athos*, Paris, 1960, p. 237.

10. Տե՛ս J. LEROY, *Les manuscrits syriaques à peintures conservés dans les bibliothèques d'Europe et d'Orient*, Album, Paris, 1964, pl. 121, 2; G. MILLET, *Recherches...*, fig. 233.

11. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 399-400; M. CHATZIDAKIS, *L'Évolution de l'icone aux XI<sup>e</sup>-XIII<sup>e</sup> siècles et la transformation du templon*. - XV<sup>e</sup> Congrès International d'Études Byzantines. Rapports et co-rapports, III. Art et Archéologie. Byzance de 1071 à 1261, Athènes, 1976, fig. 12, p. 172-173.

Մեծ վարպետի աշխատանքում կայ նաեւ մէկ ուրիշ քիչ հանդիպող առանձնայատկութիւն։ Խօսքը վերաբերում է Ղազարոսի ձեռքերը կրծքին խաչած, ուղղիղ կանգնած դիրքին։ Այս մանրամասնը նոյնպէս յայտնի է 12րդ դարի երկերից։ Յարուցեալը այդպէս է ներկայացուած Լոնդոնի Վիկտորիա եւ Ալբերտ թանգարանի մէկ այլ փողոսկրէ քանդակում, Աթոս լերան (Յունաստանի) Խիլանդարի վանքի Ս. Յովհաննէսի սրբապատկերի արծաթէ շրջանակի վրայի դրուագում<sup>12</sup>, 1187 թ. քիչ առաջ կատարուած Քեթիագէյի (Երուսաղէմ) ուխտաւորների մատուռի որմնանկարներում, որը խաչակիրների կոթողային նկարչութեան հազուագիւտ օրինակներից է<sup>13</sup>։

Առանձնայատուկ ուշադրութեան է արժանի նաեւ Ղազարոսի գերեզմանի վերեւում բազմաթիւ չէնքերի առկայութիւնը։ Խնդրոյ առարկայ թեմայով կատարուած տեսարաններում ճոխ ճարտարապետութիւնը երեւան է գալիս դեռեւ 10րդ դարի, այսինքն՝ Մակեդոնական վերածնութեան, յուշարձաններում, բայց յատկապէս 13րդ դարի աշխատանքներում է այն ներկայացւում աւելի ծաւալուն, մանրամասն տեսքով<sup>14</sup>։

Թորոս Ռոսլինի մանրանկարի պատկերագրական յատկանիշների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ քննուող ստեղծագործութիւնը կապում է յատկապէս 10-13րդ դարերի արուեստի երկերի հետ։ Կիլիկեան այն տեսարանի առանձնայատկութիւնների մեծ մասը առաջին անգամ ի յայտ է եկել Կոմնինեան դարաշրջանի բիւզանդական աշխատանքներում։

Ռոսլինեան մասունքում արտացոլուած նոյն ժամանակի ոճական աւանդութիւնները հաստատում են պատկերագրական քննութեան ծցտութիւնը։ Կոմնինեան դարաշրջանի գեղանկարչական սկզբունքներից է բնանկարի եւ կերպարների ընդգծուած կապը, լեռների, բլրակների ձեւերի միջոցով գործող անձանց շարժումների շեշտումը<sup>15</sup>։ Ինչպէս վերը արդէն մատնանշեցինք այս առանձնայատկութիւնը տեղ է գտել Ռոսլինի մանրանկարում։ Սա 13րդ դարի բիւզանդական, նաեւ հայկական արուեստագէտների նախորդ հարիւրամեակի վարպետներից ժառանգած գեղագիտական երեւոյթներից մէկն է<sup>16</sup>։

12. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 401-402, 403-404.
13. Տե՛ս A History of the Crusades, General editor K. M. Setton, vol. IV, *The Art and Architecture of the Crusader States*, Edited by H. W. Hazard, Wisconsin, 1977, fig. XXXVII, p. 262.
14. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 399-400, 407-408.
15. Տե՛ս L. HADERMANN-MISGUICH, *Tendances expressives et recherches ornementales dans la peinture byzantine de la seconde moitié du XII<sup>e</sup> siècle*. - «Byzantion», 1965, t. 35, p. 448.
16. Տե՛ս L. CHUKASZYAN, *The Style of Grigor the miniaturist and late Commene painting*. - II International Symposium on Armenian Art, Yerevan, 1978, p. 4-5.

12րդ դարի, յատկապէս դարավերջի, այսպէս կոչուած ուշ կոմ-նինեան գեղանկարչութեան պատկերագրական եւ ոճական աւանդոյթները, ըստ երեւոյթին, այն գիտելիքներն են, որ Ռուսինը ժառանգել է իր ուսուցիչներից:


Նկատի առնելով Ռուսինի մանրանկարի կապերը համեմատուող յուշարձանների հետ, այդուհանդեռձ, պէտք է ասել, որ նրա աշխատանքը չի կրկնում ոչ մի յայտնի պատկեր: Ռուսինեան այդ երկը տարբերում է հարիւրաւոր նոյնանուն տեսարանների շարքում եւ իր առանձին յատկանիշներով, ինչպէս ցոյց տրուեց վերը, նոյնիսկ բացառիկ է:

«Ղազարոսի յարութիւնը» թեմայով կատարուած Ռուսինի միւս մանրանկարը (նկ. 2) գտնուում է 1267-1268 թթ. Մալաթիայի Աւետարանի (Մատենադարան, թիւ 10675) ձեւալորումների շարքում<sup>17</sup>: Այս ձեռագիրը ծաղկուել է Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսի հրամանով թագաժառանդ Հեթումի համար<sup>18</sup>:

Մալաթիայի Աւետարանում մեզ հետաքրքրող պատկերը նոյնպէս հանդիպում է Յովհաննէսի բնագրում (էջ 294բ): Դա մի բազմամարդ տեսարան է, որի կենտրոնական կերպարներն են Քրիստոսը, Ղազարոսի գետին ընկած քոյրերը՝ Մարիամն ու Մարթան, ինչպէս նաև յարուցեալի պատանքը քանդող ծառան: Մանրանկարի ձախից՝ Քրիստոսի ետեւից ցոյց է տրուած ալեհեր մի առաքեալ, հաւանաբար Պետրոսը: Վերջինիս վերեւում տեսանելի են անմօրուք, երիտասարդ Թովմասի, ճերմակահեր Յովհաննէսի դէմքերը եւ երեք ուրիշ առաքեաների լուսապսակներն ու զլուկների առանձին մասերը: Մանրանկարի աջ կողմում պատանու արտաքինով Ղազարոսն է, կանգնած գերեզմանի մէջ, որն այստեղ վերածուել է, ասես, թատերական ներկայացման պայմանական կառոյցի: «Ճարտարապետական» գերեզմանի հաղորդման այդ ձեւը այդ աննախադիպ եւ նոր երեւոյթ է քըննուող թեմայի պատկերագրութեան տեսանկիւնից: Խմբագրելով հընուց յայտնի եւ զարեր շարունակ կրկնուող կառոյցների կանոնիկ տիպերը, Ռուսինը դրանց մանրամասներից պահպանել է միայն գերեզմանի բացուածքի վերեւի կոր, կամարակապ տեսքը: Այդ շնորի տեղագրութեանը համապատասխան, կարծես ստեղծագործութեան մէջ հաւասարակշռութիւն մտցնելու նպատակով, հեղինակը մանրանկարի ձախ մասում՝ առաքեալներից վերեւ, տեղադրում է լերան կատարը:

17. Տե՛ս S. DER NERSESSIAN, *L'Art Arménien des origines au XVII<sup>e</sup> siècle*, Paris, 1977, fig. 97, p. 144; T. VELMANS, *Manierisme et innovations stylistiques dans la miniature cilicienne à la fin du XIII<sup>e</sup> siècle*. - RÉA, t. XIV, 1980, p. 417-418.

18. Տե՛ս Լ. Ա. ԽՍՀԻԿԱՆ, Թորոս Ռուսինի ձեռագրի վերջին հանգրուանը, «Գարուն» ամսագիր, 1976, թիւ 4, էջ 55-62:



Նկ. 2.- «Ղազարոսի յարութիւնը», 1267-1268 թթ. Մալաքիայի Աւետարանի  
(Մատենադարան, ձեռ. 10675) մանրանկար, էջ 294թ, նկարիչ Թորոս Ռուսին:

Այս տեսարանի գեղարուեստական արժանիքների քննութիւնը ցոյց է տալիս, որ պատկերագրական առանձնայատկութիւններից առաւել այն հետաքրքիր է իր ոճական կատարումով:

Բայց նախքան ոճական կողմերի ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է վերլուծել մանրանկարի կանոնիկ յօրինուածքը, պարզելու համար, թէ Ռուսինի աշխատանքը ի՞նչ տեղ է զբաղեցնում «Ղազարոսի յարութեան» թեման ներկայացնող հարիւրաւոր երկերի շարքում: Ինչո՞վ է տարբերում եւ ո՞ր յուշարձանների հետ է առընչում:

Ռուսինի այս ստեղծագործութիւնը աւելի է յիշեցնում նախորդ դարերի հայկական մանրանկարները, քան 1265 թ. պատկերը: 11րդ դարի Անիի եւ Փոքր Հայքի մատեանների նկարագրումների նմանողութեամբ այստեղ եւ ընդդրկուած են Ղազարոսի գետնին ընկած քոյրերը: Նրանցից մէկը՝ Մարիամը գրկում է Քրիստոսի ոտքը, իսկ միւսը՝ Մարթան, շրջուում եւ նայում է յետ՝ եղածորը: Քոյրերի կերպարները արուեստի երկերի մէջ մուտք են գործել գեռեւս նրդ դարում<sup>19</sup>: 11րդ դարի հայկական վերոյիշեալ մանրանկարներում նրանց դիրքերը տարբերակուած են: Արուեստաբան Օ. Դեմուսը, որին ծանօթ չեն եղել այդ յուշարձանները, ցոյց է տալիս, որ նշուած առանձնայատկութիւնը բնորոշ է 12րդ դարի բիւզանդական աշխատանքներին<sup>20</sup>:

Քննուող կանոնիկ յատկանիշը Ռուսինը կարող էր իր մանրանկարի մէջ ներմուծել հին հայկական ստեղծագործութիւնների օրինակով, օգտուելով այն ձեռագրերից, որոնք մայր երկրից՝ բուն Հայաստանից, բերւում էին Կիլիկիա եւ, անկասկած, մատչելի էին Հռոմելայի գրչատանը<sup>21</sup>:

Ռուսինը կարծես մեզ առաջին անգամն է ներկայացնում հարիւրաւոր պատկերներից ծանօթ քոյրերի կերպարները: Թւում է անուանի ծաղկողը այստեղ մագաղաթին է դրոշմում բազմիցս իր աչքով տեսած կենսական որոշակի իրադարձութիւնը եւ ցուցադրում կիլիկեանարքայի կամ իշխանների առաջ ընկած, աղերսող հապատակներին: Իրական կեանքից որսուած պաղատանքի պահի յուշը կայ Քրիստոսի ոտքը համբուրող Մարիամի գործողութեան մէջ:

1265 թ. պատկերի նման Մալաթիայի Աւետարանի ձեւաւորման մէջ կարելի է տեսնել 11րդ դարի Անիի գրքարուեստի եւ 12րդ դարի բիւզանդական երկերի աւանդոյթների արտացոլքը ի դէմս աշակերտների թուի աւելացման:

19. Տե՛ս T. A. IZMAILOVA, *Le cycle des fêtes...*, pl. VI; IDEM, *L'Iconographie du cycle des fêtes...*, fig. 13, 14.

20. Տե՛ս G. SCHILLER, *Christian Iconography*, p. 182.

21. Տե՛ս O. DEMUS, *The Mosaics of Norman Sicily*, p. 270.

Ոոսլինի առաջին եւ երկրորդ մանրանկարները հարազատեցնող եւ կոմնինեան դարաշրջանից ժառանգուած առանձնայատկութիւններից է ծառայի այտին հպած ձեռքի շարժումը:

1268 թ. նկարազարդման մէջ ի տարբերութիւն կիլիկեցի վարպետի նախորդ ստեղծագործութեան, կան նոյն ժամանակի արուեստի այլ սկզբունքներ եւս: Դրանցից է Ղազարոսի մինչ այդ անծանօթ դիրքը. նա կանգնած է գերեզմանի բացուածքի մէջ գլուխը փոքր-ինչ թեքած: Այս կանոնիկ մանրամասնը առաջին անգամ տեսնում ենք վերը յիշուած Սինայի սրբապատկերում<sup>22</sup>:

Ոոսլինեան մանրանկարում իր կնիքն է թողել կոմնինեան ժամանակաշրջանի ոճը նոյնպէս:

Նախորդ դարի բիւզանդական նմոյշների հետ անմիջականօրէն կամ իր ուսուցիչների միջոցով հաղորդակցուելիս Ռոսլինը նորամուկն էր լինում նաեւ այդ երկերի ոճի մէջ: Կիլիկեցի վարպետի ոճը սնած, նրա արուեստում հետք թողած աղքիւրները ուսումնասիրելու առումով ուշագրաւ է Քրիստոսի ձեռքի կողքին նկարուած զգեստի ծածանուող ծայրը, որը ասես քամու ուժից մղում է առաջ եւ ծալք-ծալք իջնում ցած: Չնչին տարբերութիւններում այն կրկնում է Վենետիկի Մարչիանա գրադարանում պահուող յունական ձեռագրի (յուն. 540) պատկերներից մէկում Եսայի եւ Եղեկիէլ մարգարէներ հագուստների նոյն մանրամասնը<sup>23</sup>:

Հարկ է նշել, որ Հ. Բուկմթալը այդ մատեանի ձեւաւորումները թուազրում է 11րդ դար, իսկ Վ. Ն. Ղազարեւը՝ 12րդ դարի առաջին կէս<sup>24</sup>:

Ոոսլինի մանրանկարի ոճական քննութիւնը փաստօրէն հաստատում է պատկերագրական վերլուծութեան ճշտութիւնը:

Մեծ գեղանկարչի ոճի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ «Ղազարոսի յարութիւնը» թեմայով ստեղծած նրա առաջին եւ երկրորդ պատկերները տարբերում են ոչ միայն կանոնիկ առանձնայատկութիւններով:

1268 թ. մանրանկարում սեփական ճակատագրին հնագանդուելու զգացողութիւնն է ընթերցուում Ղազարոսի դէմքին եւ իր տրամադրութիւնը նրա գլխի շարժման հետ միասին կարծես փոխանցում է սաւանի ծայրը բռնած ծառային:

22. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 399-400.

23. Տե՛ս Վ. Ն. ՂԱԶԱՐԵՒ, Բիւզանդական գեղանկարչութեան պատմութիւն, հատ. 2, Ալասա, Մոսկովա, 1948 (ռուսերէն), տախտ. 157 ա:

24. Տե՛ս H. BUCHTHAL, *Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, Oxford, 1957, p. 27. Վ. Ն. ՂԱԶԱՐԵՒ, Բիւզանդական գեղանկարչութեան պատմութիւն, հատ. 1, Մոսկովա, 1947, էջ 114, 317, 328 (ռուսերէն):

Պատշաճը քանդող այդ անձնաւորութիւնը Ռուսինի մանրանկարում ամենազգացմունքային կերպարն է: Նրա դէմքի խոր տիրութիւնը կարծես նախապատրաստում է ձեւաւորման միւս մասերի յուղական աստիճաններով: Ղազարոսի եւ ծառայի ուղղուածութեանը հակադիր է ներկայացուած Քրիստոսի եւ առաքեալների խմբի ընթացքը: Ուսուցչին հետեւող ալեհեր աշակերտի տագնապալից արտայայտութեամբ հայեացքը երկար մնում է դիտողի յիշողութեան մէջ: Կարծես վարանող, շփոթուած շարժումով դէպի դէմքը բարձրացուած ձեռքը մատնում է նրա հոգեկան անհանգստութիւնը: Դրամատիկ դրոշմ են կրում նրանցից վերեւ պատկերուած երկու առաքեալների դիմագծերը:

Ողբեոգական երանգներ են նշմարելի նաեւ Մարթայի՝ Ղազարոսի միւս քրոջ եղբօրը ուղղուած հայեացքում եւ գլխի շարժման մէջ:

Բոլոր կերպարներից միայն Քրիստոսի դէմքին է, որ տիրական արտայայտութեան հետ մէկտեղ կան եւ առանձին կենսախինդ ելեւէջներ: Կամկած չկայ, որ Ռուսինը, կողք կողքի դնելով, միմեանց է հակադրում նրա եւ պատանքը բացողի յուղական նկարագրերը: Նրանցից մէկի արտաքինում բեւեռացուած է լաւատես, թելազրող, անկոտրում կամքը, իսկ միւսի մէջ ճակատագրի ուժերի առաջ տեղի տուող, հպատակող, յուսահատ հոգեվիճակը: Այս երկու էակների տրամադրութիւններն այնքան ճշմարտացի ու իրական են, որ ակամայից ենթադրում ես, թէ նկարիչը որսացել է անգամ եւ այստեղ արձանագրել մարդկանց բաժանող հասարակական դիրքերի տարբերութիւնը:

Քրիստոսի եւ Ղազարոսի պատանքը բացող ծառայի համար բնորդ ծառայած մահկանացուները արդեօք չե՞ն գտնուել հասարակական տարբեր աստիճանների վրայ, իրարից բաժանուած տնտեսական, հոգեւոր խոր անջրապետով:

Քրիստոսի եւ ծառայի զգեստների գունաւորումը միանգամայն համահնչուն է նրանց զգացմունքային նկարագրին: Ղազարոսի սաւանը բացողի կարմիր քղամիդը եւ կանաչի ու շագանակագոյնի խառնուրդով հաղորդուած գուլպանները մանրանկարի առաւել հնչեղ մասըն են:

Ուշագրաւ է, որ այդ կերպարի զգեստի կարմիրը կրկնում է նաեւ բիւղանդական եւ հայկական ձեռագրերի նոյն թեմայով կատարուած ձեւաւորումներում<sup>25</sup>: Նկատուած երեւոյթը պատահական է

25. S. K. WEITZMANN, *Late Antique and early Christian Book illumination*, London, 1977, pl. 29; S. M. PELEKANIDIS, P. C. CHRISTOU, CH. TSIOUTIS, S. N. KADAS, *The Treasures of Mount Athos*, illuminated manuscripts, vol. 1, Athens, 1973, fig. 221, vol. 2, Athens, 1975, fig. 432; S. DER NERSESSIAN, *L'Art byzantin art européen*, Publications filmées d'art et d'histoire, Paris, 1965, p. 59-60, vue 3;

արդեօք, թէ գործ ունենք թեմային բնորոշ կանոնիկ օրինաչափութեան հետ:

Միջնադարեան գունային պատկերագրութեանը համապատասխան է թուում նաեւ կապոյտը Քրիստոսի հագուստի վրայ: Կապոյտ է նրա պատմուճանը՝ խիտոնը, իսկ թիկնոցը (himation) մուգ վարդագոյն: Այս զուսպ գոյների նկարչի համար դրամատիկ տրամադրութիւնը աւելացնելու միջոց են, իսկ ծառայի քղամիդի կարմիրը տեսարանը աւելի լարելու հնարաւորութիւն: Կարմիր բժին տրուող կարեւորութիւնը զգացւում է նրա տեղադրութիւնից: Այդ բիծը կարծես յուշում է, որ այդտեղից պիտի սկսել պատկերի «ընթերցումը»:

Քրիստոսը եւ ծառան իրար են հակադրուած, ուստի հակասական են եւ նրանց գոյները: Այս երկու կերպարները մանրանկարի յօրինուածքի իմաստային առանցքն են, դրամատիկ «բախման» կենտրոնը: Նրանց համապատասխան են ընտրուած եւ մնացած կերպարների գոյները:

Միջնադարեան կանոնիկ մտածողութեան համաձայն Քրիստոսի առջեւ ընկած, դէմքը նրա ոտքին դիպցնող Մարիամի շարժումը ըմբռունում էր որպէս «մարդու լիակատար ինքնամերժումը, Աստծու մէջ նրա լուծումը» (Վ. Ա. Պլուտին): Այդ իսկ պատճառով որոշ վարպետներ, օրինակ՝ ուսւ նկարիչ՝ Անդրէյ Ռուբլենվը, Մարիամին պատկերում էին Քրիստոսի զգեստի գոյներով, իբրեւ Աստծու հետ ամբողջապէս միաւորուելու նշան<sup>28</sup>:

Նոյն մտածելակերպը հաւանօրէն թելադրել է Ռուսլինին Մարիամի հագուստը Քրիստոսի կապոյտից աւելի խուզ կապոյտով հաղորդել, իսկ Մարթայի գլխանոցը՝ մուգ շագանակագոյնով: Քոյրերի զգեստների գոյները մասամբ կրկնուելով Քրիստոսի եւ ծառայի կերպարներում, ասես «հաշտեցնում» են վերջիններիս գոյները եւ իւրատեսակ անցում նշանաւորում այդ երկուսի միջեւ:

Ղազարոսի պատանքը, Պետրոսի թիկնոցը, ինչպէս նաեւ առաքեալներից վերեւ պատկերուած լերան գագաթը հաղորդուած են նոյն սպիտակ նարնջագոյնով, այդպիսով հաւասարակշռելով կենտրոնա-

A. MARAVA-CHATZINICOLAOU, CH. TOUFEKI-PASCHOU, *Catalogue of the illuminated Byzantine Manuscripts of the National Library of Greece*, Athens, 1978, fig. 652, p. 231, 239; Armenian Miniatures, Text and Notes by L. A. DOURNOVO, Preface by S. Der Nersessian, New York, 1961, pg. 61. Հայկական մանրանկարչութիւն, ներածական յօդուածը եւ նկարների բացատրութիւնները Լ. Ա. Դուռովովոյի, Խմբագրութիւնը եւ առաջարանը Ռ. Գ. Դրամբեանի, Երեւան, 1967, նկ. 49:

28. Տե՛ս Վ. Ա. Պլուտին, Անդրէյ Ռուբլենվ՝ «Ղազարոսի յարութիւնը»: - Բիւզանդական, հարաւային պաւոնները եւ հին Ռուսիան, Արեւմտեան Եւրոպան, Վ. Ն. Ղազարեւին նուիրուած յօդուածների ժողովածու, Մոսկովա, 1873, էջ 305 (ռուսերէն):

կան անձանց գունային ակտիւութիւնը։ Փայլուն գեղանկարչի հոտառութեամբ Ռոսլինը զգում է, որ ուժեղ գունային բծերը պահանջում են մեղմ երանդաւորմամբ միջավայր։

Քրիստոսի եւ Պետրոսի միջեւ երեւացող բաց կարմիրը ոչ թէ սոսկ պատանքը բացողի քղամիդի հետ նոյն մակարդակի վրայ գտնըւող, նրան համապատասխան գունային արձագանգ է, այլեւ միջոց է առաքեալների խմբի «սառնութիւնը» ջերմացնելու համար։ Այդ երկու կարմիրներին արձագանգող «ակնարկներ» կան նաեւ մանրանկարի վերեւի մասում։ Նկատի ունենք կարմիր բնով ծառը լերան վրայ եւ պատկերի հանդիպակաց մասում, նոյն մակարդակի վրայ գտնուող «խոպոպիկ» նմանող յաւելուածը կառույցի եղրին։

Գոյների տեղադրութիւնը այստեղ կարծես գտնուած է մաթեմատիկական ճշգրտութեամբ։

Հետաքրքիր է, որ կարմիրների տեղադրութիւնը նոյն ձեւով, բայց աւելացուած նոր, կարմիր բծերով, հանդիպում է եւ 13րդ դարի 80ական թուականներին ստեղծուած կիլիկեան անստորագիր Աւետարանի (Մատենադարան, թիւ 9422) «Ղազարոսի յարութիւնը» մանրանկարում<sup>27</sup>։ Այս մատեանի ձեւաւորումները ժամանակին վերագրուել են Թորոս Ռոսլինին, իսկ այժմ համարում են նրա ոչ պակաս տաղանդաւոր աշակերտներից մէկի գործը։ Համեմատուող պատկերների նմանութիւնը չպէտք է դիտել պատահական։ Ըստ երեւոյթին սա այն դէպքերից մէկն է, երբ Ռոսլինի շրջանակի, գուցէ եւ արուեստանոցի, նկարիչները զարգացնում են եւ նոր աստիճանի հասցնում իրենց ուսուցչից ստացած գիտելիքները։

Լերան գագաթի ծառերը կապոյտ եւ կարմիր բներով, կանաչ եւ կապոյտ սաղարթներով թոյլ են տալիս աւելի լաւ ըմբռնել ուսուլինեան գունային ընկալումների բացառիկութիւնը եւ նոյնիսկ օգնում հասկանալու 20րդ դարի հայ մեծանուն վարպետների հայկականութիւնը։

Այդ մանրամասները ոչ միայն գաղափար են տալիս Ռոսլինի անուրջների աշխարհի գոյների մասին։ Դրանք նրա աշխատանքում հանդէս են գալիս իբրեւ ողջ պատկերի զգացմունքային ուժեղացուցիչներ։

Տ. Վելմանսը ուշադրութիւն է դարձնում լերան կատարի այն երկու ծառերին, որոնց բները խաչւում են։ Նա նշում է, որ նման տիպի ծառերը յաճախ են հանդիպում գոթական մանրանկարներում<sup>28</sup>։ Արուեստագէտը ցոյց է տալիս որ այդ մանրամասնը զարգացուած ձեւով՝ աւելի պաթետիկ հնչեղութեամբ հանդէս է գալիս Կեռան թագուհու 1272 թ. Աւետարանի (Երուսաղէմ, Սբ. Յակոբեանց վանքի

27. Տե՛ս Հայկական մանրանկարչութիւն, նկ. 49։

28. Տե՛ս T. VELMANS, *Manierisme...*, p. 418.

հաւաքածու, թիւ 2563) Ղազարոսի յարութեան» մէջ<sup>29</sup>: Այս ձեռագրի նկարազարդումները եւս վերագրել են Թորոս Ռոսլինին: Բայց տարեց տարի նորանոր փաստեր են երեւան գալիս եւ դրանք հաւաստում են, որ Կեռանի Աւետարանի հիասքանչ ձեւաւորումների հեղինակը Ռոսլինի աշակերտն է<sup>30</sup>, մեր կարծիքով անգամ ուսուցչին գերազանցած աշակերտը:

Տ. Վելմանսը գտնում է, որ Թորոս Ռոսլինի մանրանկարի «դասականութեանը հակասող» եւ նրանից յետոյ եկող գեղանկարիչների ճաշակը կանխող մանրամասներից են ոչ միայն քննուած ծառերը» այլեւ ճարտարապետական միջավայրը: Նա ցոյց է տալիս, որ պատկերի մէջ խորացող, ասես բեւեռուող, շինութիւնը շատ շարժուն է չնորհիւ սուրբ անկիւնների եւ իր ուրուագծի վերեւում կրկնուող հատուածի: Նրա կարծիքով, այդ կարգի կառոյցը բիւզանդական արուեստում քիչ է հանդիպում, բայց յաճախակի եւ հետեւողական կերպով ներկայացնում է Մոնրէալի խճանկարներում:

Սակայն «շատ թեթեւ եւ օդային կուլիսը» (Տ. Վելմանսի արտայայտութիւնն է) Մոնրէալում մասերի է բաժանուում եւ տարածութեան մէջ տեղադրուում բոլորովին այլ կերպ: Սիցիլիական խճանկարներում, ըստ Տ. Վելմանսի, չէնքի հաղորդումը ծառայում է կերպարների շարժումները հաւասարակշռող «կայուն խորք» ստեղծելուն, նկարի մէջ՝ «անշարժունակ (ստատիկ) տարր» ներմուծելուն, իսկ Թորոս Ռոսլինի աշխատանքում այն մասնակցում է գործող անձանց շարժումներին<sup>31</sup>: Մենք կարող ենք ցոյց տալ թէ կառոյցի մասերը ինչպէս են արձագանքում կարմրազգեստ ծառայի ձեռքերի ուղղուածութեանը, նկարուած լինելով դրանց զուգահեռ:

Այդ շինութեան հաղորդումը մեր վարպետի ստեղծագործութեան մէջ ոիթմիկ խնդիրներ իրականացնելուց բացի ակտիւորէն մասնակցում է նաեւ ընդհանուր գունաշարի լուծմանը: Մառայի եւ Ղազարոսի ետեւում կառոյցը ներկուած է մուգ կանաչ եւ կապոյտ, որի չնորհիւ այն նպաստում է յիշեալ կերպարների առաւել հնչեղութեանը:

Հողաշերտի սառը կանաչը եւ բաց վարդագոյնը նրբօրէն մերւում են կանաչի եւ կապոյտի հետ եւ հնարաւորութիւն տալիս, որ Քրիստոսի, կանանց եւ ծառայի զգեստները գունագեղ կերպով ներդաշնակուեն շրջապատի հետ:

29. 'Տե՛ս նոյն տեղում, նկ. 3, էջ 418:

30. Տե՛ս H. C. EVANS, *Canon Tables as an Indication of Teacher-Pupil Relationships in the Career of Toros Roslin.* - In: *Medieval Armenian Culture*, Edited by T. Samuelian and M. Stone, (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6), Chico, California, 1984, p. 272-290.

31. Տե՛ս T. VELMANS, *Manierisme...*, p. 418, note 5.



Նկ. 3.- «Ղազարոսի յարութիւնը», Վասակ իշխանի Աւետարածի (Վաշինգտոն, Ֆրիբ  
Պատկերասրահ, ձեռ. 32-18) մանրանկար, էջ 625, Ալեքսի Թորոս Ռոսիին:

Մանրանկարի ընդհանուր գգացմունքայնութիւնը պայմանաւորուած է առանձին գոյների ակտիւ հնչեղութեամբ եւ երանգների աստիճանական փոփոխութեամբ։ Վերջինս վերաբերում է շինութեան ներկայացման ձեւին։ Կապոյտների մեղմ անցումներից բացի այդտեղ դիտում է բաց վարդագոյնից մինչեւ շագանակագոյնը կատարուող երանգային զարգացումը։

Թորոս Ռոսլինը բազմաթիւ գունագեղ մանրանկարներ է աւանդել մեզ, բայց 1268 թ. Մալաթիայի Աւետարանի ձեւառումը իր պարզութեամբ կարծես անտիկ դասական արուեստից եկող ներդաշնակութեան իր օրէնքներով, գունային իւրայատուկ տրամաբանութեամբ մէկն է լաւագոյններից:

Պատկերագրական, ոճային այլ առանձնայատկութիւններով է աչքի ընկնում «Ղազարոսի յարութիւնը» թեմայով Ռուլինի երրորդ աշխատանքը՝ (նկ. 3) Վասակ իշխանի Աւետարանի (Վաշինգտոն, Ֆրիը Արուեստի Պատկերասրահ, 32:18) նկարազարդումը (էջ 625): Իր գերջին աշխատութիւնների մէջ Ս. Տէր-Ներսէսեանը նշում է, որ Ֆրիբի անստորագիր մատեանը նկարագրագուած է Ռուլինի կողմէց

32. *St. S. DER NERSESSIAN*, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, Washington, 1963, fig. 170, p. 33-34.

եւ պէտք է համարուի նրա վերջին աշխատանքը<sup>33</sup> (թէեւ նկարչի անունը եւ ձեռագրի թուականը, ինչ-ինչ պատճառներով չեն պահպանուել յիշատակարաններում):

Այստեղ ձախից նկարուած են Քրիստոսը եւ նրան հետեւող երեք առաքեալները: Ընդգրկուած են նաեւ Ղազարոսի քոյրերը, որոնց շարժումները տարբերակուած են, ինչպէս 1268 թ. մատեանի պատկերում: Ռոսլինը ներկայացնում է Մարիամին գլուխը Քրիստոսի ոտքին մօտեցնելիս՝ այսինքն չի կրկնում այն շարժումը, որը պատկերել էր 1268 թ. մանրանկարներում:

Աջից երկարաւուն ուղղանկեան տեսքով եւ եռանկիւնածեւ ճակատամասով (Փրոնտոնով) գերեզմանի առջեւ կանգնած է Ղազարոսը: 1265 թ. ձեռագրի մանրանկարի նման նա այստեղ ձեռքերը խաչել է կրծքին: Նոյն ձեւաւորման օրինակով յարուցեալի կողքին կանգնած ծառան ձախ ձեռքը մօտեցնում է աջ կողին: Այս կերպարի կատարման հարցում Ռոսլինը շեղւում է հարիւրաւոր յուշարձաններում տեսանելի կանոնից: Ծառան Վասակի Աւետարանում չի քանդում Ղազարոսի պատանքը կամ քիթը ծածկում հոտից պաշտպանուելու համար: Դրա փոխարին նա աջով մատնացոյց է անում յարուցեալին: Արեւելքում կամ Արեւմուտքում գժուար է գտնել որեւէ այլ պատկեր, որտեղ դիտուի այդպիսի մանրամասն:

Վասակ իշխանի մատեանի ճեւաւորման մէջ, ի տարբերութիւն ռոսլինեան նախորդ քննուած ստեղծագործութիւնների, գերեզմանի ետեւից ներկայացնուած է Ղազարոսի յարութեանը ականատես հրեաների խումբը, որոնց միայն դէմքերն են երեւում: Ռոսլինի միւս աշխատանքներում բացակայում էր նաեւ դագաղի կափարիչը կրող ծառան: Վերջինս այստեղ երեւում է մանրանկարի աջ անկիւնում: Նորութիւն է եւ գերեզմանի կողքից տեսանելի, ասես, կիլիկեան ամրոցների պարիսպների շարուածքն ունեցող պատը եւ նրա ետեւից պատկերուած քաղաքի շնչքերի տանիքները: Առաջին անգամ է հանդիպում գերեզմանին կից բլրակը, որից վերեւ ցոյց են տրուած հրեաների դէմքերը:

Նոր կերպարների յայտնուելուն եւ բնանկարին ու ճարտարապետութեանը տրուող կարեւորութեան աւելացմանը կարող էր նպաստել Անիի 11րդ դարի մանրանկարչութեանը եւ 12-13րդ դարերի բիւզանդական արուեստին Ռոսլինի քաջատեղեակ լինելը:

Բայց չի կարելի չնկատել, որ մեծ վարպետի աշխատանքը տարբերում է անեցի նկարչի գործ համարուող Մուղնու Աւետարանի

33. Տե՛ս IDEM, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1974, p. 15; IDEM, *L'Art arménien des origines au XVII<sup>e</sup> siècle*, Paris, 1977, p. 138.

ձեւաւորունից<sup>34</sup> ե՛ւ ճարտարապետական ու բնանկարային մանրամասների իրականացմամբ, ե՛ւ կերպարների ներկայացման բնոյթով, ե՛ւ նրանց տեղադրութեամբ: Այսպէս օրինակ, 11րդ դարի հայկական պատկերում հրեաների խումբը ցոյց է տրուած ամբողջութեամբ եւ ոչ թէ միայն դէմքերի կատարումով: Բացի դրանից Անիի մանրանկարում երկու մարդ են բռնում կափարիչը:

Հետաքրքիր է նշել յուշարձանների այն շրջանակը, որտեղ նկարուած է կափարիչը մենակ կրող ծառան: Դրանք են Ներեզիի (Հարաւսլավիա) Ս. Պանտելէյյոն եկեղեցու 1164 թ. որմնանկարը, Մոնրէալի արդէն յիշատակուած խճանկարները, Կուրքինովոյի (Հարաւսլավիա) Ս. Գէորգ եկեղեցու 1191 թ. որմնանկարը, նոյն ժամանակի յունական Աւետարանի (Աթէնք, Ազգային գրադարան, 93) մանրանկարը, 13րդ դարի առաջին կէսի երկու ասորական ձեռագրերի նկարագրումները, 12րդ դ. վերջի կամ 13րդ դ. սկզբի յունական սրբապատկերը Սինայից (Կատարինէ վանքի հաւաքածու), 12րդ դարի գործ հանդիսացող Ս. Գերեզմանի եկեղեցու (Երուսաղէմ) հարաւային ճակատի քանդակը, որը խաչակրաց արուեստի նմոյշներից է եւ այլ երկեր<sup>35</sup>:

Ինչ վերաբերում է ճարտարապետութեանը ու բնանկարին, ապա ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը «Ղազարոսի յարութիւնը» թեմայի կանոնիկ յօրինուածքում զարգացում են ստանում 12րդ դարում, իսկ յետոյ փոխանցուելով պալէոլոգեան շրջանի արուեստագէտներին, շարունակւում են մեծ չափով պատկերուել նաև նրանց աշխատանքներում<sup>36</sup>:

12րդ հարիւրամեակի ստեղծագործութիւններում է առաջին անգամ յայտնուում առաքեալների Քրիստոսին հետեւող երեք հոգուց բաղկացած շքանումքը: Պատկերագրական այդ առանձնայատկութիւնը ունեցող նմոյշներից են խաչակիրների մանրանկարչութեան այնպիսի մի նշանաւոր օրինակ, ինչպիսին է Մելիսենդի Սաղմոսագրքի (Քրիտանական թանգարան, Էգերտոն 1139) ձեւաւորումը եւ բիւզանդական գեղանկարչութեան լաւագոյն նմոյշներից Պալերմոյի (Սիցիլիա) Կապելլա Պալատինայի խճանկարը<sup>37</sup>:

34. Տե՛ս T. A. IZMAILOVA, *Le cycle des fêtes...*, pl. VI.

35. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 401-402; O. DEMUS, *The Mosaics of Norman Sicily*, pl. 67b, p. 283; L. HADERMAN-MISGUICH, KURBINOVO..., fig. 181, p. 134; A. MARAVA-CHATZINICOLAOU, CH. TOUFEXI-PASCHOU, *Catalogue...*, fig. 652; J. LEROY, *Les manuscrits syriaques...*, pl. 106, 2, 129, 1; K. WEITZMANN, *Byzantium and the West around the Year 1200*. - In: *The Year 1200: A Symposium*, New York, 1975, fig. 20; *A History of the Crusades...*, fig. XXXVII; G. MILLET, *Recherches...*, p. 236-237.

36. Տե՛ս K. WESSEL, *Erweckung des Lazarus*, col. 403-404, 407-408.

37. Տե՛ս H. BUCHTHAL, *Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, pl. 5a; O. DEMUS, *The Mosaics of Norman Sicily*, pl. 20a.

Ղազարոսի գլխանոցը յիշեցնում է Ռուսինի 1265 թ. մանրանկարի առիթով՝ նշուած խաչակիրների որմաննկարը Բեթփագէի (Երուսաղէմ) ուխտաւորների մատուռում։ Եւրոպական իրականութան հետ է կապւում ոչ միայն այդ մանրամասնը։ Քրիստոսին հետեւող առաքեալներից մէկի գլխի գագաթը սափրած է, որ բնորոշ է կաթոլիկ հոգեւորականներին։

Նոյնը կարելի է ասել նաեւ ծառաների զգեստների ձեւերի մասին։

Քանի որ մանրանկարի վերաբերեալ պատկերացում ենք ստանում միայն մէկ եւ հաւանօրէն բնօրինակին ոչ այնքան հարազատ վերատպութիւնից, ուստի զգուշանում ենք գունաշարի մասին ընդարձակ դատողութիւններ անելուց։

Այդուհանդեռձ կարելի է նկատել, որ գունաշարը հարուստ է, բարդ եւ այսուղ յատուկ նշանակութիւն է տրուած կարմրի բռնկումներին։ Դրանք հանդէս են գալիս թէ՛ մենաւոր ծառի բնի, թէ՛ Քրիստոսի ձեռքի մագաղաթէ փաթեթի, թէ՛ ծառաների հագուստների, եւ թէ՛ գերեզմանի ետեւի շնչքի տանիքի վրայ։ Ակտիւ հնչեղութիւն ունեն նաեւ կապոյտաները, որոնք հանդիպում են Մարիամի զգեստի, Ղազարոսի պատանքի ու Քրիստոսի (որի պատմուճանը կարծես ոսկեզոյն է) թիկնոցի վրայ։ Վերջինիս գունաւորումը ծնունդ է տալիս որոշակի հարցադրումների բիւզանդական գրքարուեստում արդեօք գոյութիւն չի<sup>38</sup> ունեցել որեւէ գունային կանոնիկ օրինաշափութիւն, որի թելաղրանքով Ռուսինը կապոյտն ու ոսկեզոյնն է ընտրել իր գլխաւոր կերպարի համար։ Կանոնիկ չէ<sup>39</sup> արդեօք Ղազարոսի պատանքի կապոյտը 1265 թ. եւ Վասակի աւետարանների մանրանկարներում։

Այսպիսի հարցումների առիթ են տալիս նաեւ նոյնատիպ օրինակներով «Ղազարոսի յարութեան» ձեւաւորումները բիւզանդական գրքարուեստի մէջ<sup>38</sup>։

Ս. Տէր-Ներսէսեանը այս պատկերի մասին գրում է, որ «իրենց դիրքերով, շարժումներով եւ դէմքի արտայայտութիւններով կերպարները հաղորդում են հիմնական մարդկային զգացմունքները»<sup>39</sup>։ Սրան կարող ենք աւելացնել, որ մանրանկարների զգացմունքայնութիւնը մեծ չափով պայմանաւորուած է նաեւ կարմիրների ու կապոյտների օգտագործումով։

38. *Sbv' K. WEITZMANN, Late Antique and Early Christian Book Illumination*, pl. 29; S. M. PELEKANIDIŞ, P. C. CHRISTOU, CH. TSIOUTIS, S. N. KADAS, *The Treasures of Mount Athos...*, vol. 1, fig. 221; A. MARAVA-CHATZINICOLAOU, CH. TOUFEXI-PASCHOU, *Catalogue...*, fig. 652.

39. *Sbv' S. DER NERSESSIAN, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, p.33-34.

Ռուսլինի արուեստի ակունքների մասին մեր իմացութիւնը լրացնող, անցեալի մութ էջերը բացայայտող հետաքրքիր փաստեր կարելի է առանձնացնել ինչպէս Վասակ իշխանի Աւետարանի նկարազարդման գունաշարի, այնպէս էլ ոճական կատարման միւս կողմերի մէջ։ Անփորդ արուեստասէրի աչքից կարող են վրիպել, բայց մասնագէտի համար որոշակի կարեւորութիւն ունեն Քրիստոսին հետեւող երկրորդ առաքեալի գգեստի թեւքի մանրամասները։

Նրա արմուկի վրայ նկատելի է ձուածեւ մի ծալք, որի վերեւից ուսից զիգզագներով ցած են իջնում հագուստի դարսերը։ Այս իւրայատուկ ծալքաւորումը նոյնութեամբ հանդիպում է դեռեւս 1256 թ. Զէյթունի Աւետարանի (որը Ռուսլինի առաջին ստորագրուած ձեռագիրն է) Մարկոսի պատկերում։ Մեզ հետաքրքրող մանրամասնը առաջին անգամ երեւան է գալիս 11րդ դարի բիւզանդական ձեռագրերից մէկի (Վատիկանի գրադարան, յուն. 756) աւետարանիչներին միասին ներկայացնող մանրանկարի մէջ, ապա փոխանցւում խաչակիրների գրքարուեստին եւ դիտում 12րդ դարի երրորդ քառորդում երուսաղէմում ստեղծուած երկու մատեանների աւետարանիչների ձեւաւորումներում<sup>40</sup>։ Այդ երկու յուշարձանների՝ Փարիզի Ազգային գրադարան (լատին. 276) եւ Վատիկանի գրադարանի (լատին. 5974) ձեռագրերի նկարազարդումները, Հ. Բութիսալի կարծիքով, ծաղկուել են յոյն, խաչակիր եւ հայ վարպետների համագործակցութեամբ։ Յիշարժան է, որ այս ոճական մանրամասնը կայ նաև վերը նշուած թեթիքագէի մատուելի որմնանկարում, որը նոյնպէս խաչակիրների արուեստի երկերից է։

Նկարազրուած ոճական առանձնայատկութեան թորոս Ռուսլինի արուեստի մէջ յայտնուելը հետութեամբ հնարաւոր է բացատրել ե՛ւ բիւզանդական 11րդ դարի գրքարուեստի օրինակների հետ նրա ծանօթ լինելու պարագայով ե՛ւ խաչակիրների գեղանկարչութեան նմոյշների օգտագործման հետեւանքով ե՛ւ վերը յիշուած երուսաղէմեան ձեռագրերի նկարազարդմանը մասնակցած հայ վարպետների միջոցով, որոնք կարող էին լինել Ռուսլինի ուսուցիչները։

Կիլիկեան 13րդ դարի մանրանկարչութեան մէջ մանիէրիստական ոճական յատկանիչների համար ակօս բացող վարպետներից մէկն էլ թորոս Ռուսլինն էր, ուստի նա չէր կարող յուշադիր չինել այն բոլոր մանրամասների նկատմամբ, որոնք, յայտնուելով անցած դարերի արուեստում, իրենց մէջ կրում էին մանիէրիզմի սաղմերը։

«Ղազարոսի յարութիւնը» թեմայով ստեղծուած Ռուսլինի նկարաշարքը օգնում է հասկանալ, թէ ինչպէս էր իրականանում աւան-

40. Տե՛ս H. BUCHTHAL, *Miniature Painting in the Latin Kingdom of Jerusalem*, pl. 142a, 35a, 45a, 48a.

դոյթների փոխանցումը նախորդներից Ռոսլինին եւ նրանից իր յաջորդներին: Այս աշխատանքների շնորհիւ պարզ է դառնում, թէ ինչպէս էր զարգանում կիլիկեցի ծաղկողի վարպետութիւնը:

«Ղազարոսի յարութեան» նկարաշարքը արժէքաւոր փաստեր է տալիս թորոս Ռոսլինի տարբեր տարիների գեղարուեստական կողմնորոշումների, հետաքրքրութիւնների մասին:

Այս կամ այն դարերից պահպանած կանոնիկ առանձնայատկութիւններից աւելի այդ մանրանկարները հետաքրքիր են իրենց նոր գծերով, պատկերագրական յայտնի օրինաչափութիւններից զանազանուրդ կամ հեռացող յատկանիշներով, գոյնի եւ գծի ծաւալման իւրայատուկ եղանակով, յուզական նկարագրով եւ այլն:

Կիլիկեցի նկարիչը կուրորէն չի հետեւել գրական հիմքին, այլ տուել է դարերով սրբագործուած գրական շարադրանքի իր անհատական ըմբռնումը, աւետարանական պատմութեան վերընթերցման ուրոյն ձեւը: Պատկերից պատկեր տաղանդաւոր ծաղկողը, ասես, ցուցադրում է ներկայացուող թեմայի վերաբերեալ կուտակած իր գիտելիքները, իր հմտութիւնը:

Ռոսլիննեան այս մասունքները բացայայտում են 13րդ դարի կիլիկեան արուեստագէտի, խորզգան մարդու մտածելակերպը, թոյլ տալիս սահմանազատել այն բնագծերը, որտեղ վերջանում է միջնադարեան կանոնիկ գեղագիտական փիլիսոփայութիւնը եւ սկսւում գեղանկարչական՝ խոշոր անհատականութեան մասնագիտական որոնումները, փայլուն մտաւորականի աշխարհընկալումը:

ԼԵՒՈՆ ԶՈՒԳԱՍՏՁԵԱՆ